

ցաւ Գեթսեմանիի պարտէզին մէջ. բռնողները որպէսզի Յիսուսը քաղաքին մեծ զոնէն չանցընեն՝ անարգութեան համար Աղբիւսաց զոնէն քաղաք տարին զայն: Երբ Կեղրոնի Ձորին կամուրջը հասան՝ թոյլ չտուին անոր վրայէն անցնիլ, վասնզի ան կը կոչուէր Յաղթութեան կամուրջ: Ուստի մեր Տէրը անցուցին բոկ ոտքով ցամքած հեղեղատէն, ապառաժ քարերու և սրածայր խիճերու վրայէն: Նոյն ժամանակ, կ'ըսէ աւանդութիւնը, թէ այդ կարծրագոյն քարերը կակղացան Տիրոջ ոտքերուն տակ և անոնց վրայ տպաւորուեցան Անոր հանդերձի նշանները ու սուրբ ոտքերուն և ծնկաց հետքերը ու քաղցրացան հեղեղատի սուր խիճերը (Հան. էջ 258-259, Alf. էջ 301):

Արգուլֆ եպօ. 700 ին Ս. Աստուածածնի եկեղեցին այցելած ժամանակ աջ կողմը կը տեսնէ պատը ազուցուած քար մը, որուն վրայ Քրիստոս ծունկի եկած էր, երբ մատնութեան գիշերը կ'աղօթէր. իր ծունկերուն նշանները տեսնուած էին քարին վրայ, իբր կակուղ և մոմի պէս բան մը^(*) (E. T. P. էջ 4):

Sir John Maundeville 1322 ին կը գրէ. «Յովսափատի Ձորին մօտը կար ծառ մը (որմէ շինուած էր խաչը) ու ձորին մօտ հողին մէջ փոս մը ուր մինչև հիմակ կայ պատուանդանը սիւնի մը՝ որուն վրայ մեր Տէրը առաջին անգամ ձաղկուեցաւ (E. T. P. էջ 176):

7. Քրիստոսի մարմնոյն դրոսը ժայռին վրայ՝ Չարաբանաց գիւղերը. — 1484ին ուխտաւոր Փելլիքս Ֆապրի կը գրէ. «Ամբոխը չկրցաւ յարձակիլ Յիսուսի վը-

(*) Այս քարը ո՛չ քէ Ս. Կուսի Գեթսեմանին քանարին մէջ ազուցուած էր, այլ մօտ զսնուած այրին եկեղեցիին վրայ (Bar. gr. էջ 117):